Աշխեն Սողոմոնյան[1]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՈՒԾԱՐՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Իրավաբանական անձանց լուծարման և այդ գործընթացում դրանց պարտատերերի շահերի պաշտպանության խնդիրները հանդիսանում են ժամանակակից կորպորատիվ իրավունքի կարևորագույն խնդիրներից մեկը: Իրավաբանական անձանց լուծարման խնդրին իրավաբանական գրականության մեջ ավանդաբար մեծ ուշադրություն է հատկացվել, և իրավաբանական անձի գոյության դադարեցումը համեմատվել է ֆիզիկական անձի մահվան հետ[2]: Իրավաբանական անձի լուծարումը բնութագրվում է որպես մի գործընթաց, որի վերջնարդյունքում իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման մասին համապատասխան գրառում կատարելուց հետո իրավունքի սուբյեկտը կորցնում է պետության կողմից ճանաչված իրավունակությունը, իսկ գոյությունը՝ դադարում[3]:

Ներկայումս իրավագետների մի մասը իրավաբանական անձի լուծարումը բնութագրում է որպես նրա գոյության դադարեցման միջոց առանց նրա իրավունքներն ու պարտականություններն այլ անձի փոխանցելու հնարավորություն[4], իսկ մյուս մասն էլ հարում է այն կարծիքին, որ իրավաբանական անձի լուծարմամբ նրա գոյությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու, բացառությամբ օ-

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Դ. Մ. Սերոբյան:

[2] Տե՛ս **Мейер Д. И.,** Русское гражданское право (2 ч.) (По исправленному и дополненномы 8-у изд., 1902). Издание 2-е, испр., М., 2000, էջ 153:

[3] Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.,** Կորպորատիվ հարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատ., 2013 թ., էջ 139:

[4] Տե՛ս **Шиткина И. С.,** Корпоративное право, М., Волтерс Клувер, 2007, էջ 200, Гражданское право: Учебник: В 2 т., т. 1/ Отв. ред. Е. А. Суханова. 2-е изд., перераб. и доп., М., 1998, էջ 202, **Трофимов К. Т.,** Реорганизация и ликвидация коммерческих организаций: Автореф. дис. … канд. наук. М., 1995, էջ 15:

բենքով նախատեսված դեպքերի[5], այսինքն, վերջիններս ընդունում են իրավահաջորդության առկայությունը իրավաբանական անձի լուծարումից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[6] 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը[7] դադարում է՝ առանց իրավունքները ու պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի[8] 27-րդ հոդվածի 1-ին կետով լուծարումը բնութագրվում է որպես ընկերության դադարում՝ առանց իրավունքները ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցելու: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի[9] 51-րդ հոդվածով ևս բացառվում է իրավահաջորդության հնարավորությունը ընկերության լուծարման դեպքում: Վերը թվարկված օրենսդրական նորմերի մեկնաբանման արդյունքում ակնհայտ է դառնում, որ իրավաբանական անձի լուծարման ժամանակ իրավահաջորդություն հնարավոր չէ: Սակայն այլ իրավական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձի պարտականությունների մասով իրավահաջորդություն հնարավոր է: Այսպես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի[10] 16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային մարմնի ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշմամբ կարող են դրվել իրավաբանական անձի որոշումների վրա ազդելու հնարավորություն ունեցող սեփականատերերի և (կամ) ղեկավար մարմնի անդամների վրա՝ լուծարմանը նախորդած

---

[5] Տե՛ս **Ավետսիայն Վ. Դ.,** նշված աշխատությունը, էջ 142:

[6] ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

[7] Կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «գործունեություն» բառը սխալ է օգտագործված, քանի որ լուծարմամբ դադարում է իրավաբանական անձի գոյությունը, այլ ոչ թե գործունեությունը: Այս կապակցությամբ հակասություն կա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների» մասին ՀՀ օրենքի միջև, որի 26-րդ հոդվածը օգտագործում է «ընկերության դադարում», այլ ոչ թե «գործունեության դադարում» հասկացությունը:

[8] ՀՀՊՏ 2001.11.06/34(166):

[9] ՀՀՊՏ 2001.12.07/38(170):

[10] ՀՀՊՏ 1997.05.20/11:

մեկ տարվա ընթացքում հարկային մարմնից թաքցրած հարկային օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով, եթե նշված պարտավորությունները ծագել են այդ անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով: Մեկ այլ օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 435-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները դադարում են իրավաբանական անձի (պարտապանի կամ պարտատիրոջ) լուծարմամբ, սակայն նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, անդրադառնալով լուծարվող իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման հերթականությանը, որպես երկրորդ հերթով բավարարման ենթակա պահանջ նշում է այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար, նման պահանջները բավարարվում են համապատասխան պարբերական վճարների կապիտալացման միջոցով[11]: Այսինքն, ստացվում է, որ չնայած իրավաբանական անձը որպես իրավունքի սուբյեկտ դադարել է, սակայն նրա պարտականությունները ենթակա են կատարման մեկ այլ իրավունքի սուբյեկտի կողմից: Հետևաբար թեև լուծարման գործող հասկացությամբ իրավահաջորդություն տեղի չի ունենում, սակայն հարակից օրենսդրական ակտերով սահմանված իրավական նորմերի շրջանակներում որոշ դեպքերում լուծարված իրա-

[11] «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N914-Ն որոշման հավելվածի 11-րդ կետը նախատեսում է, որ հաշվարկված գումարը միանվագ ստանալու վերաբերյալ քաղաքացու կողմից սահմանված ժամկետում առաջարկություն չստանալու կամ այդ ժամկետում՝ հաշվարկված գումարը պարբերական վճարումների ձևով ստանալու վերաբերյալ քաղաքացու առաջարկությունը ստանալու դեպքում, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը (լուծարողը) քաղաքացուն հասանելիք գումարը կապիտալացնում է՝ այն փոխանցելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության անվամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան տեղական գանձապետական բաժնում այդ նպատակով բացված արտաբյուջետային հաշվեհամարի՝ լուծարվող իրավաբանական անձի անվանմամբ հաշվին: Այսինքն, այդ գումարները պարբերական վճարումների ձևով վճարելու պարտականությունը իրավահաջորդության կարգով անցնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

վաբանական անձի իրավունքների ու պարտականությունների իրավահաջորդությունը հնարավոր է: Այս ճանապարհով է գնացել նաև ՌԴ օրենսդիրը և քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ իրավաբանական անձի լուծարումը հանգեցնում է դրա դադարեցման առանց իրավունքներն ու պարտականություններն ունիվերսալ իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցելու: Հետևաբար ՌԴ օրենսդիրը, բացառելով ունիվերսալ իրավահաջորդությունը, միաժամանակ հնարավոր է համարում սինգուլյար իրավահաջորդությունը: ՀՀ-ում գործող դատական պրակտիկան ևս գնացել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախանշված ուղիով և դատարանները, այդ թվում նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, իրենց դատական ակտերում ևս հանգել են այն եզրակացության, որ իրավաբանական անձի պարտավորությունները դադարում են վերջինիս լուծարմամբ[12]:

Իրավաբանական անձանց լուծարման հասկացության քննարկումն այս աշխատանքի շրջանակներում կապված է այդ իրավաբանական անձի պարտատերերի իրավունքների պաշտպանության հետ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենգրքի 69-րդ հոդվածը, անդրադառնալով իրավաբանական անձանց լուծարման կարգին, նշում է, որ պարտատերերի պահանջները բավարարվում են մինչև լուծարման հաշվեկշիռը հաստատելը, որից հետո մնացած գույքը հանձնվում է նրա հիմնադիրներին (մասնակիցներին): Սակայն եկեք քննարկենք մի իրավիճակ, երբ պարտատերերից ոմանք ինչ-ինչ պատճառներով լուծարային հանձնաժողովին չեն ներկայացրել իրենց պահանջները, ընկերությունը լուծարվել է, սակայն հետագայում պարզվում է, որ առկա է այդ իրավաբանական անձին հանձնման ենթակա գույք կամ դրամական միջոցներ: Նման դեպքերում, մեր կարծիքով, անհրաժեշտ է, որ վերը նշված՝ նախկինում իրենց պահանջների բավարարում չստացած պարտատերերը, դիտվեն որպես լուծարված իրավաբանական անձի իրավահաջորդներ և նրանց անցնի այդ գույքը իրենց պահանջներին համամասնորեն: Հետևաբար մենք կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ինչպես նաև ոլորտին առնչվող մյուս օրենքներում լուծարմանը տրված հասկացությունը փոփոխման կա-

[12] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ԵԱՔԴ/02/10 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

րիք ունի այն իմաստով, որ թեև իրավաբանական անձի լուծարման դեպքում ունիվերսալ իրավահաջորդություն տեղի չի ունենում, սակայն սինգուլյար իրավահաջորդություն իրավաբանական անձի որոշ պարտականությունների, ինչպես նաև իրավունքների առնչությամբ առաջանում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է իրավաբանական անձանց լուծարման երկու դեպք՝ կամավոր և հարկադիր: Իրավաբանական անձանց կամավոր լուծարում կարող է տեղի ունենալ նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որի համար այն ստեղծվել է: Իսկ հարկադիր կարգով իրավաբանական անձը լուծարվում է դատարանի կողմից այդ իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ, ինչպես նաև դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների, հասարակական միավորման կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում: Ինչպես կամավոր, այնպես էլ հարկադիր լուծարման դեպքում կարևոր է իրավաբանական անձի պարտատերերի և նրա կողմից թողարկված արժեթղթերի շրջանառությանն առնչվող այլ սուբյեկտների իրավունքների ու շահերի պաշտպանության խնդիրը, որի կարգավորումը գործող օրենսդրությամբ զուրկ չէ թերություններից:

Իրավաբանական անձանց հարկադիր լուծարման ժամանակ պարտատերերի պաշտպանության հետ կապված կարող են ի հայտ գալ հետևյալ խնդիրները: Այսպես, ենթադրենք,որ ստեղծվել է ինչ-որ «X» ընկերություն, որն ունի զուտ ակտիվների բավականին բարձր արժեք, մեծ թվով աշխատատեղեր, պայմանագրային հարաբերությունների մեջ է գտնվում բազում այլ սուբյեկտների հետ, սակայն որոշ ժամանակ անց պարզվում է, որ ընկերության գրացման ժամանակ թույլ են տրվել օրենքի որոշ խախտումներ, դատարանն անվավեր է ճանաչում այդ ընկերության գրանցումը, և սկսվում է դրա լուծարման

գործընթացը[13]: Սա հանգեցնում է այդ ընկերության մասնակիցների, նրա պարտատերերի շահերի խախտմանը, քանի որ վերջիններս, այդ ընկերության հետ հարաբերություններ հաստատելով, նպատակ են ունեցել ստանալ որոշակի պարբերական շահույթ: Նախ նշենք այն խնդիրը, որը կախված է այն հարցի հետ, թե ինչպիսի խախտումների դեպքում է, որ դատարանը կարող է իրավաբանական անձի գրանցումը ճանաչել անվավեր: Այս կապակցությամբ գրականության մեջ առաջարկվել է կատարել օրենքի փոփոխություն և ՀՀ քաղաքացիական օրենգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ[14]:

«2) դատարանի կողմից ընկերության գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տված օրենքի կոպիտ խախտումների հետ, և եթե այդ խախտումները հնարավոր չէ վերացնել»:

Մեր կարծիքով նման մոտեցումը միանգամայն արդարացի է, սակայն այս օրենսդրական բացն այսքանով չի սահմանափակվում: Մասնավորապես օրենքը չի ամրագրում այն սուբյեկտների շրջանակը, ովքեր կարող են ընկերության լուծարման պահանջ ներկայացնել. արդյոք նման պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ, թե անհրաժեշտ է սահմանել սուբյեկտների որոշակի շրջանակ և նրանց համար սահմանել նման իրավասություն: Գտնում ենք, որ նման պահանջ ներկայացնելու իրավասություն պետք է սահմանվի լիազոր մարմնի համար, այդ կարող է հանդիսանալ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմինը: Անհրաժեշտ է նաև նախատեսել որոշակի ժամկետ, որի ընթացքում կարող է անվավեր ճանաչվել ստեղծված իրավաբանական անձի գրանցումը, և այն լուծարվել: Գտնում ենք, որ այդ ժամկետը պետք է սահմանափակվի իրավաբանական անձի ստեղծումից հետո 3 ամիս ժամկետով, քանի որ միանգամայն անարդարացի է լուծարել մի ընկերություն, որն արդեն մի քանի տարի է գործում է, և իր կայուն դիրքն ունի շուկայում, բացի այդ 3 ամիսն այն նվազագույն ժամկետն

---

[13] Հետաքրքրական է, որ եթե ընկերության գրանցումն անվավեր է ճանաչվում, ապա այն համարվում է գոյություն չունեցող. այստեղ հարց է ծագում, թե ինչպես է կատարվում գոյություն չունեցող իրավաբանական անձի լուծարումը:

[14] Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.,** Կորպորացիայի լուծարման իրավական առանձնահատկությունները, Օրինականություն, 2013, N 79, էջ 29:

է, որի ընթացքում իրավաբանական անձը դեռևս չի հասցնի լայնածավալ գործունեություն իրականացնել և պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել այլ սուբյեկտների հետ: Արդյունքում չեն խախտվի նաև ընկերության պարտատերերի շահերը: Այստեղ անհրաժեշտ է նշել 2014 թվականի սեպտեմբերի 1-ից ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածում կատարված հետևյալ փոփոխությունները, որոնց համաձայն՝ անձը, որը բարեխղճորեն հիմնվել է իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրի տվյալների վրա, իրավունք ունի ելնել այն փաստից, որ դրանք համապատասխանում են իրականությանը[15]:

Բացի այդ եթե ուսումնասիրում ենք զարգացած երկրների փորձը, ապա այնտեղ ընդհանրապես իրավաբանական անձի հարկադիր լուծարման նման հիմք բացակայում է: Այսպես Գերմանիայում ընկերությունը կարող է լուծարվել.

1. դրա ստեղծման մասին փաստաթղթերով նախատեսված ժամկետը լրանալու կապակցությամբ,
2. ընկերության մասնակիցների 3/4-ի որոշմամբ,
3. երբ դատարանը որոշում է ընդունում ընկերության սնանկության մասին[16]:

Պարտատերերի իրավունքների պաշտպանության առնչությամբ անհրաժեշտ է քննարկել նաև ՀՀ քաղաքացիական օրենգրքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատման օրվանից լուծարման հանձնաժողովը գումարներ է վճարում իրավաբանական անձի պարտատերերին 70-րդ հոդվածով նախատեսված հերթականությամբ: Օրենսդրությունն առանձին կարգավորում է նաև այն հարցը, թե ինչ է տեղի ունենում այն պարտատերերի պահանջների հետ, որոնք չեն ընդունվել լուծարային հանձնաժողովի կողմից: ՀՀ քաղ. օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուծարման հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջների բավարարումը մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև իրավաբանական անձի լուծարման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի հայց հարուցել ընդդեմ լուծարման հանձնաժողովի: Սակայն պետք է նշել, որ օ-

---

[15] Տե՛ս http://base.garant.ru/10164072/4/#block_1004

[16] Տե՛ս The German Stock Corporation act, Martin H. Heidenhain, Kluwer Law Internatioanl, 2000, էջ 239:

բենսդրի կողմից առաջարկված լուծումն իր հերթին առաջացնում է նոր հարցեր: Այսպես, ի՞նչ է լինում այն դեպքում, երբ պարտատերը հայց է հարուցում ընդդեմ լուծարային հանձնաժողովի լուծարման հաշվեկշիռը հաստատելուց մեկ օր առաջ: Պարզ է, որ դատարանն այդ մեկ օրում չի ուսումնասիրի հայցը, և ստացվում է, որ պարտատիրոջը տալով դատական պաշտպանության իրավունք՝ օրենսդիրը միաժամանակ չի ապահովում այդ իրավունքի արդյունավետությունը: Այս կապակցությամբ Գերմանիայի օրենսդրությամբ նախատեսված է հետաքրքիր մի նորմ, որի համաձայն՝ պարտատերերի բոլոր պահանջները, այդ թվում հարկային պարտավորությունները, պետք է բավարարվեն նախքան որևէ գույք բաժնետերերի միջև բավարարելը: Ընկերության մնացած գույքը ընկերության մասնակիցների միջև կարող է բաժանվել ընկերության լուծարման մասին պարտատերերի 3-րդ հրապարակային ծանուցումից ոչ շուտ[17]:

Այս կապակցությամբ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ նման դեպքերում դատարանի որոշմամբ պարտատիրոջ պահանջները կարող են բավարարվել ընկերության մնացած գույքի հաշվին: Պետք է նշել, որ մեզ չի բավարարում նաև ՌԴ օրենսդրի կողմից առաջարկված լուծումը, քանի որ այս դեպքերում էլ անհավասարության նշան է դրվում ժամանակին լուծարային հանձնաժողովի կողմից ընդունված ու բավարարված պահանջների և դատարանի որոշմամբ ճանաչված պարտատերերի պահանջների միջև: Քանի որ այս դեպքում կարող է լուծարվող իրավաբանական անձի մնացած գույքը չնչին լինել ու համարժեք չլինել պարտատիրոջ պահանջին կամ որ ավելի վատ է՝ կարող է ընդհանրապես գույք չմնալ[18]: Մեր օրենսդրությամբ այս խնդրին փորձ է արվել լուծում տալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ կետով, որի համաձայն՝ լուծարվող ընկերության գույքը ենթակա չէ բաժանման բաժնետերերի միջև՝ մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այսինքն, այս դեպքում ևս նման պարտատիրոջ պահանջները բավարարվում են ընկերության մնացած գույքի հաշվին, ինչը որ ՌԴ քաղաքացիական օրենս-

---

[17] Տե՛ս Key aspects of german Business Law: A practical manual. Michael Wendler. Bernd Fremml, Bernard John Buecher. Fourth edition, 2008 year, էջ 21:

[18] Տե՛ս Ликвидация юридического лица. История развития института в российском праве, современные проблемы и перспективы. **Габов А. В.,** Статут, 2010, էջ 121:

գրքով է նախատեսված: Պետք է նշել, սակայն, որ այս լուծումն էլ ևս ամբողջությամբ չի չեզոքացնում առկա խնդիրը, քանի որ այս դեպքում ևս կողմնակալ վերաբերմունք է դրսևորվում ժամանակին բավարարված պարտատիրոջ պահանջների ու դատարանի վճռով ճանաչված պահանջների միջև: Խնդիրը մնում է լիարժեք չլուծված նաև այն պատճառով, որ այս իրավակարգավորումը գործում է միայն բաժնետիրական ընկերությունների դեպքում, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում այն մնում է բաց, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընկերության լուծարումը իրականացվում է Օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով: Այսինքն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար իրավակարգավորումը սահմանափակվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով: Ուստի այս իրավակարգավորումը նման պարտատերերին դնում է անցանկալի դրության մեջ: Այն լուծարային հանձնաժողովին հնարավորություն է տալիս առանց պատասխանատվության ենթարկվելու անտեսել պարտատիրոջ ներկայացված պահանջները կամ անհիմն մերժել դրանք: Իսկ պարտատերերը նույնիսկ դատարանի կողմից հայցը բավարարելու դեպքում ստիպված են լինում բավարարվել մնացած գույքվ: Մեր կարծիքով տրամաբանական է, որ նշված դեպքերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսվի, որ լուծարվող իրավաբանական անձի պարտատիրոջ կողմից լուծարային հանձնաժողովի դեմ հայց հարուցելու դեպքում՝ կապված վերջինիս կողմից պարտատիրոջ պահանջը մերժելու կամ դրա քննարկումից խուսափելու հետ, պետք է կասեցվի տվյալ և հաջորդ հերթերի մյուս պարտատերերի պահաջների բավարարումը, մինչև դատարանի կողմից տվյալ հայցի քննումը և որոշման կայացումը:

Իրավաբանական անձանց լուծարման ժամանակ առանցքային նշանակություն ունի նաև պարտատերերի ծանուցման կարգի քննարկումը: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը նախատեսում է, որ լուծարման հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու և դեբիտորական պարտքը ստանալու ուղղությամբ, ինչպես նաև պարտատերերին տեղեկացնում է իրավաբանական անձի լուծարման մասին: Ինչպես տեսանք, նշված հոդվածը նախատեսում է ի-

բավաբանական անձի պարտատերերին վերջինիս լուծարման մասին տեղեկացնելու պարտականություն: Ինչպես գիտենք իրավաբանական անձը մեծմասամբ տիրապետում է այն տեղեկատվությանը, թե ովքեր են հանդիսանում իր պարտատերերը: Սակայն եկեք քննարկենք մի իրավիճակ, երբ հայտնի պարտատերը ինչ-ինչ պատճառներով չի ներկայացնում իր պահանջը: Այս կապակցությամբ Գերմանիայի առևտրային օրենսգրքի 301-րդ հոդվածը սահմանում է, որ եթե լուծարային հանձնաժողովին հայտնի որևէ պարտատեր չի ներկայացնում իր պահանջը, ապա նրան հասանելիք գումարը պետք է դեպոնացվի որևէ մարմնում, որն ունի նման իրավասություն[19]: Մեր կարծիքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ևս պետք է ներդրվի նման մի նորմ, որը միտված կլինի հայտնի պարտատերերի իրավունքների պաշտպանությանը, քանի որ միանգամայն անտրամաբանական է, որ իրավաբանական անձը, տիրապետելով նման տեղեկատվությանը, խուսափի իր պարտականությունների կատարումից:

Հետաքրքրական է նաև իրավաբանական անձանց լուծարման գործընթացում պարտատերերին պահանջների բավարարման հերթականության քննարկումը: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները.
- երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.
- երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

[19] Տե՛ս German Commercial Code, translated and briefly annoted by A. F. Schuster, of the inner temple, barristek at-law, London:

- չորրորդ հերթին մարվում է բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.
- հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ:

Պետք է նշել, որ պահանջներ ներկայացնելու պարտատերերի հերթականություն սահմանելը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր հերթի պարտատերերի պահանջները կարող են բավարարվել միայն նախորդ հերթի պարտատերերի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Մինչև ՌԴ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելը վերջինիս 64-րդ հոդվածը որպես առանձին հերթ ևս նախատեսում էր գրավով ապահովված պարտավորությունները, ինչպես այժմ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Ներկայումս, սակայն, այդ պահանջները առանձին հերթով չեն առանձնացվում, իսկ գրավատուների իրավունքներն ապահովվում են այնքանով, որ նրանց պահանջները բավարարվում են գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների հաշվին, և նրանք նախապատվության իրավունք ունեն մյուս պարտատերերի նկատմամբ՝ բացառությամբ 1-ին և 2-րդ հերթի պարտատերերի, որոնց պահանջի իրավունքը ծագել է մինչև գրավի պայմանագիր կնքելը[20]: Մեր կարծիքով ևս գրավով ապահովված պարտավորությունները չպետք է առանձնացվեն որպես առանձին հերթ, և դրանք չպետք է նախապատվություն ունենան կյանքին և առողջությանը պատճառված վնասից առաջացած պարտավորությունների նկատմամբ[21]: Եթե ուսումնասիրենք այլ երկրների համապատասխան օրենքները, ապա կնկատենք, որ դրանցում ևս գրավով ապահովված պարտավորությունները չեն առանձնացվում: Այսպես, Չինաստանում, որպես այդպիսին, պարտատերերի հերթեր առանձնացված չեն, պարզապես նշվում են հերթեր, որոնց շրջանակներում պետք է տեղի ունենա լուծարվող իրավաբանական անձի միջոցների բաշխումը: Դրանք բաշխվում են հետևյալ հերթականությամբ.

1. լուծարման գործընթացին առնչվող ծախսեր,

---

[20] Տե՛ս Предпринимательское (хозяйственное) право: Учебник. под ред. В. В. Лаптева, С. С. Занковского. Wolters Kluwer Russia, 2006, էջ 97:

[21] Տե՛ս նաև **Բարսեղյան Տ. Կ.,** Գործարարական իրավունք, Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան, 2009, էջ 102, ինչպես նաև **Ավետիսյանի Վ. Դ.,** նշված աշխատություն, էջ 154:

2. ընկերության աշխատակիցների աշխատավարձեր,
3. սոցիալական ապահովության վճարներ
4. աշխատակազմի անդամներին օրենքով հասանելիք փոխհատուցումներ,
5. պետական բյուջե կատարվող վճարներ,
6. պարտատերերին հասանելիք գումարներ,
7. բաժնետերերի միջև բաշխվող գումարներ[22]:

Ինչպես նկատում ենք Չինաստանում սահմանազատում է կատարված պարտատիրոջ և մնացած սուբյեկտների միջև: Իսկ Ֆրանսիայում ավելի լիբերալ մոտեցում է դրսևորվել, որտեղ տնտեսական ընկերությունների լուծարման ժամանակ պարտատերերի պահանջների բավարարման որևէ հերթականություն նախատեսված չէ. պարտատերերի պահանջները բավարարվում են այն հերթականությամբ, ինչ դրանք ներկայացվում են[23]: Եվ դա միանգամայն տրամաբանական է, քանի որ բացի սնանկության դեպքերից ընկերության բոլոր պարտատերերի պահանջները այսպես, թե այնպես բավարարվում են, և այս պարագայում հերթեր սահմանելը կարող է նաև անիմաստ թվալ:

Ելնելով վերոշարադրյալից՝ իրավաբանական անձի լուծարման գործընթացում պարտատերերի իրավունքների պահպանումն ու պաշտպանությունը ամենահիմնական խնդիրներից է: Առանց օրենսդրությամբ նախատեսված նորմերի պահպանման հնարավոր չէ կազմակերպել ընկերության լուծարումը: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ այդ նորմերն էլ կատարյալ չեն և բազմակողմանի ուսումնասիրության և փոփոխությունների կարիք ունեն: Այս առումով կարծում ենք, որ սույն հոդվածում ներկայացված առաջարկություններն ու նկատառումները կարող են ինչ-որ չափով նպաստել այդ խնդիրների լուծմանը:

---

[22] Տե՛ս Company law in China: Regulation of Business in Socialist Market Economy. Jing Yu Wang: Edward Elgar Publishing, 25 apr. 2014 year, էջ 347:

[23] Տե՛ս Law and business in France: A guide to French Commercial and Corporate Law. Christopher Joseph Mesnooh, 1994 year, էջ 157:

Ашхен Согомонян
Соискатель кафедры гражданского права ЕГУ

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЗАЩИТЫ ПРАВ КРЕДИТОРОВ ЛИКВИДИРУЕМОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ КОМПАНИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ликвидация юридических лиц и защита интересов кредиторов являются одной из важнейших проблем современного корпоративного права. Исходя из этого обстоятельства автор в статье обсудил теоретические и практические проблемы, связанные с наличием правопреемства в процессе ликвидации, основаниями добровольной и принудительной ликвидации юридического лица, порядком уведомления кредиторов, очередностью удовлетворения требований кредиторов, предложены способы их разрешения и представлен зарубежный опыт, связанный с этими проблемами.

Ashkhen Soghomonyan
PhD student of the at the YSU Chair of Civil Law

SOME ISSUES OF PROTECTING CREDITORS' RIGHTS DURING THE LIQUIDATION OF AN ECONOMIC COMPANY IN THE RIPUBLIC OF ARMENIA

Liquidation of legal entities and protection of creditors' interests are one of the most important problems of the modern corporate law. Based on this fact the author of the article discussed theoretical and practical problems associated with the presence of the succession in liquidation, voluntary and forced liquidation of the legal entity, the priority of the satisfaction of demands of creditors, offered their solutions and presented foreign experience related to these problems.

Բանալի բառեր՝ *իրավաբանական անձանց լուծարում, պարտատեր, պահանջների բավարարման հերթականություն, ծանուցում, իրավահաջորդություն, հարկադիր և կամավոր լուծարում:*
Ключевые слова: *ликвидация юридических лиц, кредитор, очередность удовлетворения требований, уведомление, правопреемство, принудительная и добровольная ликвидация.*
Key words: *liquidation of legal entities, creditor, priority of the satisfaction of demands of creditors, succession, voluntary and forced liquidation.*